Արձանագրություն N 3
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ հեռուստատեսային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/21» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «26» «Հունիս» 2019թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Լ. Բաբախանյան, Մ. Մնացականյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ.Սարգսյան

1. Հայաստանի Հանրապետության ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Մ.Մխիթարյան)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ: Հարցման պատասխանը ստացվել է 26.06.19թ., ըստ որի «Ին Փրոգրես Փրոդաքշն» ՍՊԸ-ի ֆինանսական չափորոշիչները գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել առաջին տեղ զբաղեցնող Մասնակցին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝

- «Ին Փրոգրես Փրոդաքշն» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են 26.06.19թ.

3. Ընթացակարգի ամփոփման մասին

(Մ.Մխիթարյան)

1. Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/21» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթող ճանաչել «*Ին Փրոգրես Փրոդաքշն*» ՍՊԸ-ն՝ 9,590,691 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

✓ 2.Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, **որոշվեց** «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/21» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 2019 թվականի հունիսի 27-ից մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Լ.Բաբախանյան

---------- Մ. Մնացականյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան